№ 69 ՄԱՅԻՍԻ 3 (15) 1878 ՄԱՅԻՍԻ 3 (15) № 69

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ. կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Ծատուրեանի խանութում

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պարսից Շահի ընդունելութիւնը։—Ներքին տեսութիւն։ Պ. Միրզաևի թանգարանը։ Նամակ Իգդիրից։ Նամակ Ներքին-Ագուլիսից։ Նամակ Խմբարին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Խնուսի անցքը։ Բումինիա։ Արտաքին լուրեր։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։

## ՊԱՐՍԻՑ ՇԱՀԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ

Երեկ հասաւ Թիֆլիս նորին մեծութիւն Պարսից շահը։ Նրա ընդունելութիւնը ամենափառաւոր էր. քաղաքից դուրս նրան ընդունեցին վարչութեան և քաղաքի ներկայացուցիչները, բոլոր փողոցները, որտեղ շահը պէտք է անցներ, զարդարված էին կանաչով, դրօշակներով և գորգերով։

Պարսից կառավարութիւնը վաղուց է որ բարեկամական յարաբերութիւնները անխախտ է պահում Ռուսաստանի հետ։ Այդ բարեկամութիւնը գլխաւորապէս բացատրվում է երկիրների ընդհանուր տնտեսական և առևտրական շահերով և այդ երկու երկիրների մէջ առևտրական գլխաւոր հրապարակը Կասպից ծովն է, իսկ լայն ուղին, որ տանում է դէպի այդ հրապարակը Վոլգա գետն է։

Բայց Պարսկաստանը բացի իր դէպի Ռուսաստանը խաղաղութեան ժամանակ ունեցած անխախտ բարեկամութենից, ապացուցեց որ և պատերազմի ժամանակ նա հաւատարիմ է մնում այդ բարեկամութեան զգացմունքին։ Վերջին ռուս-թուրքական պատերազմի ընթացքում Պարսկաստանը, չը նայելով որ Ռուսաստանը պատերազմում էր նորան հաւատակից երկրի դէմ, մահմեդական Թուրքիայի դէմ, քրիստոնեաներին մահմեդական լուծից ազատելու անունով,—Պարսկաստանը, ասում ենք, այնու ամենայնիւ Ռուսաստանին հաւատարիմ բարեկամ մնաց և չը միացաւ Թուրքիայի հետ, այլ ամբողջ պատերազմի ընթացքում չեզոք մնաց։

Մենք կարծում ենք որ Պարսկաստանից Ռուսաստանին այդ ցոյց տուած հաւատարմութեան պատճառով է գլխաւորապէս, որ ռուսաց տէրութիւնը այդքան փառաւոր ընդունելութիւն է արել նորին մեծութեանը Պարսից շահին։

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### Պ. ՄԻՐԶՈԵՎԻ ԹԱՆԳԱՐԱՆԸ ԵՒ ՆՐԱ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Այն մարդը, որ կը տեսնէր Թիֆլիսը քսան տարի բացակայ լինելուց յետոյ, չափազանց կը զարմանար, երբ կը տեսնէր այդ քաղաքի առաջադիմութիւնը համեմատաբար այդպիսի փոքր ժամանակամիջոցում։ Քաղաքը թէ բարոյական և թէ նիւթական առաջադիմութիւն է գործել։ Փողոցների և շէնութիւնների մեծացնելը, քարայատակը, քաղաքի լուսաւորութիւնը վերաբերում են նիւթական առաջադիմութեանը, իսկ բնակիչների ձգտումը դէպի կրթութիւն, որ երևում է կրթական հիմնարկութիւնների բազմանալուց վերաբերում է բարոյական զարգացմանը։ Այն ենթադրութիւնը թէ թէ կրթական հիմնարկութիւնների շատանալը ազգաբնակութեան բազմանալու բնական հետևանք է, այս դէպքում յարմար չէ, որովհետև վերջին 20 տարվայ ընթացքում Թիֆլիսի ազգաբնակութիւնը կրթական հիմնարկութիւնների պէս երեք անգամ չաւելացաւ։ Սրա պատճառը այն կրթութեան պէտքն է, որ զգացին բնակիչները, մինչև անգամ ստորին դասը։ Այդ պէտքը մաքրեց մեր քաղաքի ասիական բնաւորութիւնը և բարձրացրեց նրան մինչև Եւրոպայի մաւոր մակերևոյթը։ Սրանով թէպէտ մեր քաղաքը կորցրեց իր հետաքրքիր կողմերը ճանապարհորդի համար (որին միշտ նահապետականը աւելի է հետաքրքրում, քան թէ լուսաւորութիւնը), բայց Անդրկովկասի համար դարձաւ ամենալաւ մայրաքաղաք։

Ինչ կը վերաբերի գեղարուեստին, չէ կարելի չը խոստովանել, որ Թիֆլիսը շատ ուրախալի աջողութիւններ ունեցաւ, թէկուզ միայն ֆօրտեպիանօի խաղի կողմից։ Մինչդեռ առաջ երկու երեք դիլետանտներ էին բաւականութիւն տալիս երաժշտական կրթութեանը, այժմ մի և նոյն գործով զբաղված են երաժշտութեան ութ ուսուցիչներ և 10 ուսուցչուհիք, իսկ պ. պ. Սավանելիի և Միլանդարիի հիմնած երաժշտական ուսումնարանը հետզհետէ շատ են յաճախում։ Թէպէտ պէտք է խոստովանել, որ եռանդը դէպի երաժշտութիւնը մասամբ մոդայից է, մի և նոյն ժամանակ շատ ընտանիքներ կան, որոնք ունեն պարզ հասկացողութիւն երաժշտութեան նշանակութեան և արժանաւորութեան մասին։

Նկարչական կրթութիւնը մեր ուսումնարաններում կատարելապէս մոռացված է։ Նրա համար պէտք է ևս պէտք է շատ հոգսեր տանել։ Մեր հարուստ ընտանիքներում անգամ գժուար կը գտնէք օրինաւոր պատկերներ կամ գիպսից շինած արձաններ։

Ճշմարիտ է, մի քանի արժանաւոր ուսուցիչներ բաց արին Թիֆլիսում նկարչական ուսումնարան, բայց գլխաւոր նպատակին հասնելու համար, այսինքն երիտասարդութեան մէջ տեսական բնութեան գեղեցկութեան հասկացողութիւնը զարգացնելու համար, պէտք է միջոց տալ յաճախ տեսնել գեղարուեստական նկարները, ինչպէս երաժշտութիւն սովորելու համար անպատճառ պէտք է լաւ երաժշտութիւն լսել։ Բայց եթէ դժուար է ստեղծել լաւ երաժշտական հիմնարկութիւն, աւելի դժուար է պատկերների հաւաքածու կազմել, որովհետև այս հանգամանքում ոչ թէ միայն փողն է դեր խաղում այլ և դէպքը և ընդունակութիւնը գտնել մի որ և է տեղ կորած գեղեցիկ պատկեր և շատ ուրիշ այսպիսի պայմաններ։

Այդ պատճառով չէ կարելի չը համակրել մի մասնաւոր անձի այդպիսի ձեռնարկութեանը, որ նշանաւոր գումարներ է զոհում այնպիսի գործի համար, որ միայն կառավարութիւնը կամ քաղաքային հասարակութիւնը կարող է իրագործել։

Պ. Միրզոեվ պատկերների հաւաքածու կազմելով մեծ ծառայութիւն արեց իր մայրենի քաղաքին, մնում է ցանկանալ, որ հասարակութիւնը օգուտ քաղի այդ հիմնարկութիւնից և մանաւանդ դրդի երիտասարդութիւնը շուտ շուտ այցելել։

Պատկերների թւում կան նշանաւոր նկարիչների ստեղծուածների՝ իտալացիների. Salvator Rosa, Dolci, Tintoretto, Londonio, Caraci, սպանացիների՝ Velasquez և Murillo, նիդերլանդցիների՝ Netcher, Rubens, Huysum, Honte-Horst և այլն, ֆրանսիացիների՝ Rigo, Lebrun, Frösack, Duchet։ Բացի այս, պատկերների գալերէում կան ակվարելներ Alt-ի, Peters-ի գլուխներ, Henriette Gerbes-ի պատուներ և այլն։ Բացի այդ այդտեղ կան երևելի պատկերների պատճէններ, որոնցով ինչպէս երևելի բանաստեղծական գրուածների թարգմանութիւններով, կարելի է բնագիրը ճանաչել։

Նկարչութեան սաստիկ սիրող լինելով, ես տարաբաղդաբար այնքան չեմ հասկանում այդ գեղեցիկ արուեստը որ կարողանամ դատողութիւններ յայտնել առանձին հեղինակութիւնների մասին։ Բայց որովհետև այստեղ գործին լաւ ծանօթ անձինք շատ կան (որոնք այս տողերի հեղինակի մօտ գովում էին պատկերները) թողնում եմ նրանց դատել։ Ինձ համար, իբրև ուսուցչի համար գեղարուեստական այդպիսի հաւաքածուն մանկավարժական նշանակութիւն ունի, և ես ինձ թոյլ կը տամ մի քանի նկատողութիւններ։ Ի հարկէ շատերի համար դրքա աւելորդ կը լինեն, և ես մի քանի դատողութիւններից յետոյ այս առարկայի վրա համոզվեցայ, որ ամենքին չէ վերաբերում։

Նկարչութեան լաւ ստեղծուածների կրթողական ազդեցութիւնը արժանի կերպով չէ գնահատվում։ Ինքն իրան հասկանալի է, որ պատկերի կամ արձանի գործած բօպէական ազդեցութիւնը այնպէս չէ գրգռում կամ ապաւորութիւն գործում, ինչպէս երաժշտութեան լսելը։ Ժամանակակից էսթետիկ շատ իրաւացի նկատում է. «Միւս գեղարուեստները մեզ համոզում են, իսկ երաժշտութիւնը դրաւում է», բայց համոզմունքի հետևանքը աւելի երկար է մնում, աւելի խորն է թափանցում հոգու մէջ և այդ պատճառով նրա ազդեցութիւնը երկարատև է լինում։ Զարմանալի է որ ես երաժշտութեան դասատու, խօսում եմ իմ սիրած արհեստի թոյլ կողմերի մասին։ Կարծիք չը կայ, որ երաժշտութիւնը այնպիսի խորը գեղարուեստական տպաւորութիւններ գործեց, որոնց ոչ մի արուեստ չէր կարող ինձ վրա ունենալ։ Ես ճանաչում եմ լուսաւորված, էստետիկ ճաշակ ունեցող, գեղարուեստը հասկանալու ընդունակ մարդիկ, որոնք հիացմամբ նայում են պատկերին և ձանձրանում են, երբ ամենալաւ երաժշտութիւն են լսում և հակառակ՝ հիացմամբ լսում են երաժշտութիւնը և ձանձրանում են պատկերին նայելու ժամանակ։ Այս բոլոր կրթութենից և բնական ձգտումներից է առաջանում։ Զը նկատել Բաֆայելի և Տիցիանի ստեղծուածների գեղեցկութիւնը գրեթէ մի և նոյն է, որ խուլը լսի Մօցարտի և Բեթհովենի սիմֆոնիաները։ Գեօթեն, որ, ինչպէս յայտնի է, քիչ էր հասկանում երաժշտութիւնը, դառնութեամբ դանգատվում էր իր բարեկամ Ցիլտերին։ «Գիտեմ, գրում էր երևելի բանաստեղծը, որ այդպիսով կեանքիս երրորդ մասը կորցնում եմ։» Ինչից պէտք է զրկվեն նրանք, որոնք անտարբեր են դէպի իրանց շրջապատող աշխարհը։ Իւրաքանչիւր զգայմունք, ասում է Հաղեմէյստեր արտայայտվում է այնպիսի ֆունկցիաներով, որոնց ոչ մի այլ զգացմունք չէ կարող առաջ բերել։ Սրանից երևում է, որ մի կողմից այնպիսի մարդն է զգացմունքով կատարելագործված, որ ունի բոլոր զգացմունքները, միւս կողմից այն մարդն ունի գեղարուեստական զարգացումն, որ հասկացողութիւն ունի բոլոր արուեստների վրա։ Այսպիսով երաժշտութեան ուսումնասիրելը չէ բացատրում միւս արուեստների սովորելը։ Մեր ծնողների սովորական պատասխանը այսպիսի դէպքերում լինում է հետևեալը «Մեր երեխաները երաժշտութիւն են սովորում։ Կարծես միայն երաժշտական զգացմունք կայ։ Նոքա չեն մոռանում, որ եթէ կան իրուատանական, մաթեմատիկական, սարատեղիական, լեզուագիտական և այլ հասկացողութիւններ, նոյն զանազանութիւնը կայ և զգացմունքների վերաբերութեամբ, թէպէտ հիմնաւոր ոյժը մի և նոյնն է։ Ուրեմն եթէ իւրաքանչիւր արուեստ կարելի է քննել իբրև զգացմունքի պտուղ, յիմարութիւն կը լիներ անուշադիր թողնել այնպիսի արուեստ, որ կապ ունի մարդու նշանաւոր գործարանի, աչքի հետ։ Ես չեմ պահանջում, որ ուսումնարանական պարապմունքներով խեղդված երեխաները անպատճառ սովորեն նկարչութիւն, այլ շուտ շուտ տեսնեն նկարչական պատկերներ (եթէ կարելի է ուսուցչի հետ, որ պատկերների արժանաւորութեան վրա նրանց ուշադրութիւնը դարձնէ), որ սովորեն տեսնել։ Մէկը ասել է նկարիչը առանձին ծներ չէ պահանջում, նրա համար ամեն օր տօն է։ Ոչ ոքի այնպէս յարմար չէ «աշխարհի տէր» տիտղոսը, որքան նկարչին, որովհետև միայն նա է դիտում աշխարհի գեղեցկութիւնների բոլոր երևոյթները։ Այդ գեղեցիկ ընդունակութիւնը կարելի է ամենքի մէջ զարգացնել։

Թող համոզվեն ծնողները և ուսուցիչները, որ պատկերների թանգարանի յաճախ այցելութիւնը չէ նշանակում անգործ ժամանակ անցկացնել, այլ ներկայացնում է հասատատ միջոց զարգացնել երեխայի մէջ գեղեցկութիւնը դիտելու զգայմունքը։

(«Тиф. Вѣст.») Էպշայն

---

## ՆԱՄԱԿ ԻԳԴԻՐԻՑ

—

1 ապրիլի.

Իգդիրի հողից և աղիւսից շինած տները նորեկի աչքին անշուք մի տեսարան են ներկայացնում, որից իսկոյն իմացվում է թէ Իգդիր ոչ թէ գիւղաքաղաք է, այլ մի մեծ գիւղ, որի անկանոն, գալարուն և ցեխոտ փողոցները նորեկին մոլորեցնում են. աւելացրու սրանց վրա աթարի կոյտերը (զալաղները) և պաս մէջը, որոնց վրա անձրևի ջուրը լճակներ է կազմում և այն ժամանակ կարող ես լաւ գաղափար կազմել Իգդիրի արտաքին տեսքի մասին։ Իսկ ինչ վերաբերում է ներքինին՝ բոլորովին գիւղական ճաշակով է և շատ քիչ տներ քաղաքի ճաշակով են զարդարված։

Բնակիչները 4000 են. տղամարդների հագուստն է չերքէսկի (անչնորհ ձևով) ախալուխ, լայն շալավար, մորթէ փափախ, ոտնամանները են եամանի քոշ և սապոգ. իսկ կանայք հագնում են չլթից մենթանա, լայն վարտիկ, գլուխներ, դնում են կօպ կամ կապում են թաշկինակ, ոտներին հագնում են քոշ։

Եթէ բնակչաց արտաքին ձևին նայենք կը կարծենք թէ ազքատ ժողովուրդ են, բայց՝ ինչպէս ինքեանք վկայում են, նիւթական կարողութիւն շատ ունեն, սակայն կեղտոտ են ապրում (թերևս չրջակայ ազգաց ահից)։

Պէտք է խոստովանել որ Իգդիրցիք շատ հիւրասէր ժողովուրդ են, սակայն դատողութենից զուրկ, գաղափարները ջրհեղեղեան են, ուսումնարանի անունը խորթ է հնչվում ականջներին. հասարակաց օգտի վրա չեն ուզում մտածել անգամ, մտածողների վրա ևս ծիծաղում են. իրանց բնական խելքը թըթու են դրել և իշխանութիւն ունեցող մեծ մարդկանց ձեռքը խաղալիկ են դարձել։ Երբ հարցնում ես «ինչու այս ինչ բանը չէք խօսում, ինչու այս ինչ վնասակար մարդու դէմ չէք զինվում», պատասխանում են, «թող միւսներն ասեն դա մեր գործը չէ, ինչպէս խօսենք քանի որ այն մարդու կողմի մարդիկը շատ են, բաներս կուգան կը քանդեն, տներս կրակ կը ձգեն և այլն և այլն, ինչու խօսենք, ինչու վնաս գայ»։ Դեռ լռեցէք ինչքան ուզումէք, լռութիւնը համաձայնութեան նշան է։

Ահա այսպէս ժողովրդեան տգիտութենից օգուտ քաղելով մարդիկ՝ բռնանում են ժողովրդեան վրա և իբրև ոչխար ուր ուզում են՝ քշում են։ Իրանց կամքը հասարակաց գործն է, ժողովուրդը իրանց ձեռքում գերի է, որ ստրկական հոգով մեծանալով սովոր է միայն իր միջի օգտակար անդամոց ծաղրել, որի ապացոյց է գերեզմանատան խնդրի մէջ պատահած հետևեալ դէպքը։

Ահաւասիկ ինչ բան էր գերեզմանական խնդիրը։

Իգդիրցիք դեռ չէին հասկացել և չեն էլ հասկանում գերեզմանների բնականութեանց մօտ լինելու վնասները. և ինչպէս կարող են հասկանալ քանի որ արտաքին տեղեկութիւններ չունեն, վասն զի շատ քչերն են լրագիր ստանում. բացի այն որ այսպիսի մի մեծ գիւղ կանոնաւոր ուսումնարան չունի տղայոց համար, (թողնենք որ օրիորդաց ուսումնարան բանալը մեղք են համարում)։ Ուստի մինչև մարտի 15 իրանց մեռեալները եկեղեցու *) բակում էին թաղում։

Պ. նահանգապետը տեսնելով որ ժողովուրդը այնքան խելք չունի որ իր առողջապահութեան վրա մտածի, հրաման է հանել որ եկեղեցու բակում այլ ևս մեռեալ չը թաղեն (քանի հոգիք զրկվեցան արքայութենից)։

Ժողովրդեան մէջ սկսել է խորհրդածութիւն թէ որտեղ գերեզմանատուն չենեն։ Պ. Աւագ Աւագեան անունով մի պարոն 100 ր. է տուել և գնել մի տեղ գիւղի հարաւային կողմում գրեթէ 1 վերստ հեռու (իսկ այն 100 ր. ստացողը նուիրել է այն փողը ուսումնարանին, որ արժանի է մեծ շնորհակալութեան), խոստացել է պարսպով պատել և սեղաններ շինել տալ հաց ուտելու համար։ Զարմանալի է մի քանի եկեղեցականաց բանը, որոնք փոխանակ յորդորելու ժողովրդին նախապաշարմունքներից հեռանալու, նրա տգիտութիւնը իրանց շահուն են ծառայեցնում և նրա կրօնամոլութիւնը չափազանց աստիճանի զարգացնում ինչպէս եղել է նաև Իգդիրում։ Մի քահանայ 10 ր. է առել առաջին անգամից յետոյ և նորից մեռել թաղել եկեղեցու բակում, որ բաւական մեծ փաստ է ժողովրդեան նախապաշարմունքը հաստատ պահելու համար։ Խեղճ ժողովուրդն ինչ անէ, երբ իր հովիւները իրան դէպի խորխորատ են առաջնորդում։ Բոլոր ժողովուրդը չէ համաձայնվել պ. Աւագեանի գնած տեղում իրան մեռեալները թաղելու, այլ միայն մի մասը, ուստի ընկել է երկպառակութիւն և ժողովուրդը բաժանվել է երկու կուսակցութեան, մէկը ուղեցել է պ. Աւագեանի գնած գերեզմանատան տեղում թաղել, իսկ միւսը ասելով թէ ուրիշի փողով գնած տեղում մեր մեռեալները չենք թաղում՝ սկսել է փող հաւաքել նոր տեղ գնելու համար և հաւաքվել է 700 բուբլու չափ, որով գիւղի արևմտեան կողմում գնել են մի տեղ, բայց առաջինից անյարմար, որովհետև Իգդիրում ընդհանրապէս քամին փչում է արևմուտքից և հիւսիսից։ Յետոյ սկսել են ծաղրել պ. Աւագեանին թէ տեսար չը յաջողեց բանդ, ուր է գնված տեղդ, և այլն։ Այս է բարեգործ մարդկանց բարեաց փոխարէնը։ Ծագել են կռիւներ երկու կուսակցութեան մէջ, որոնց քաղաքագլուխը մէջ է ընկել որ հաշտեցնէ երկու կողմերը։ Երկու գերեզմանատեղիքն ևս դիտել է բժշկի հետ միասին, և մի այլ տեղ է ընտրել գերեզմանատան համար գիւղից 1 վերստ հեռու արևմտեան հիւսիսային կողմում, ուր թաղում ևս մեռեալները։

Ակ պ. Աւագ Աւագեանը իր գնած տեղը նուիրել է ուսումնարանին, բայց Իգդիրցիք փոխանակ նորանից շնորհակալ լինելու, վարձահատոյց են լինում նրան ծաղրելով, որին ազնիւ պարոնը համբերութեամբ տանում է։ Թող ուրախ լինեն պ. Աւագեանի նման ազնիւ մարդիկը, որ ժողովրդեան օգուտը մտածելու համար հալածվում են և չը խնայեն իրանց ձեռքից եկածը հասարակաց շահի համար։

Երանի թէ Իգդիրում պ. Աւագեանի պէս 5—6 հոգի ազգասիրութեան հոգով վառված հետևվեն ուսումնարանի վերականգնմանը։

Իգդիրցիք, սթափեցէք ձեր թմրեցուցիչ քնից, ձեր որդկերանց ապագան բարւոքելու ջանացէք, ինչու պէտք է ձեր ուսումնարանը այդպէս աւեր մնայ, մինչդեռ ուրիշ տեղեր նոր նոր դպրոցներ են բաց անում։

Մշեցի

---

## ՆԱՄԱԿ ՆԵՐՔԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ

—

ապրիլի 23

Այս օրվան օրը մեր գիւղացիները միւսների թւում անդիտակցաբար հեծում են մի սոսկալի ախտի մահաբեր ճիրանների ներքոյ, և բացի այն որ իրանց դառն վաստակի մի նշանաւոր մասը զոհում են ամեն տարի այդ դարևոր հրէշի անկուշտ կոկորդին, նոյն իսկ բարոյապէս գերի են դարձել նրա անիրաւ պահանջներին և հրամաններին. դա է անուշտ նախապաշարմունքի ախտը, որ անյիշատակ ժամանակներից անբաժան լինելով մարդկային ազգից, որդոց որդի դարձ է ունեցել նրա հետ և բազմադարեան վիշապի պէս ծծել է և ծծում տգէտ—անմեղների արիւնը։ Ամենացաւալին այն է, որ այդ բարոյական ախտին, որ պատճառ է եղել և լինում անթիւ թշուառութիւնների՝ այսօր գիտակից կերպով կամ անդիտակցաբար առատ սնունդ են մատակարարում մեր հոգևոր հայրերը, նրանցից շատերը մինչև անգամ յանդգնում են մեր երկնային վարդապետի խօսքերին էլ սնապաշտական կերպարանք տալ և ըստ քմաց մեկնել նրանց միամիտ ժողովրդին... և մթթէ պիտի զարմանանք, երբ Աստուծոյ սեղանի սպասաւորութեան համար ընտրվում են ըստ մեծի մասին այնպիսի անձինք, որոնք նոյն իսկ ժողովրդի մէջ ամենաբթամիտ և որ և է գործի անպէտք անդամներ են.... Սրանցով չէ վերջանում բանը, այլ կան նաև ուրիշ գործիչներ, որոնք ոչնչով յետ չեն մնում առաջիններից. դրանք են ուսումնական—տիրացուները, փարձառու ծերունիները (?) և պառաւները, որոնք որ և է բնական երևոյթից կամ իրանց խելքին անմատչելի դիպուածից գուշակում են ժողովրդին բաղդ կամ չարիք։ Սրանցից յետոյ գալիս են ջենդարկոչված պարսիկ կախարդները, որոնք ոչ սակաւ ծառայութիւն են մատուցանում հայ ժողովրդին։ Դրանք իւրաքանչիւր տարի բաղմութեամբ Պարսկաստանից անցնելով Անդրկովկաս ամեն տեղ ապագայ բաղդ և երջանկութիւն են սրսրում, թէև իրանք ոչնչի տէր են և իրանց բարութեան փոխարէն չնչին վարձ են պահանջում։ Դրանց արուեստի գաղտնիքը նորանում է կայանում, որ 72 ազգերի սատանաները մէկտեղ ժողովելով՝ մէկին սպառնալիքով, միւսին կաշառք խոստանալով, երրորդին պատժելով ստիպում են կատարել իրանց հրամանները։ Եւ որով հետև լաւ են իմանում որ կանայք առ հասարակ դիւրահաւան և դիւրաթեռ են դէպի սնահաւատութիւնը, նոքա աշխատում են ազդել առաւել իգական սեռի երևակայութեան վրա, և նրանց աջողում է անել այդ։ Հայ կինը զանազան դասեր առնելով իր բարերար պարսկից՝ ճշդութեամբ աւանդում է յետոյ իր սիրելի զաւակներին, և այդպիսով պատրաստում է լայն ասպարէզ, արդաւանդ հող, յետագայ կախարդների գործունէութեան համար։ Այս բոլորից յետոյ հասկանալի է թէ ինչ է պատճառը որ մեզանում կան այնպիսի վանքեր, որոնց մօտ գտնված ժայռերի ճեղքերը ծառայում են կանանց համար իբր հրաշագործութեան վայրեր։ Անապաշտութիւնը այդ տեղերին մինչև անգամ յատկացրել է սուրբ Սարգսի պասը՝ ծակ մտի պաս անունով, և ամենայն տարի յղի և ամուլ կանայք գիմում են նրանց ոտքը զոհերով և խոստումներով։ Այդ միամիտ ուխտաւորները յիշեալ ճեղքերից հաւիւ անցնելով՝ յղիները հաւատում են որ անխտանդ կաղատվեն իրանց երկունքից մի և նոյն ժամանակ վնասելով իրանց սիրոյ գրաւականին, իսկ ամուլները անցնելով՝ հաւատի են որ իրանց արգանդի բնական պակասութիւնը կը բարեկարգվի։ Ընթերցողը գուցէ լսած լինի որ կան այնպիսի գիւղեր, որոնցում մանկաբարձութիւնը երաղով է աւանդվում այս կամ այն կնոջ։ Տատմէր Թ. մեռնում է և յանկարծ դուրս է գալի մի ուրիշը, բոլորովին անուս և անպատրաստ, և սկսում է շարունակել իր նախորդուհու պաշտօնը։ Այս հրաչքը այսպէս են մեկնում. տատմէր Թ. իր մահից անմիջապէս յետոյ գիշերը երաղում մի նորամանուկ գրկում երևում է իր ապագայ պաշտօնակատարին և մանուկը նրան տալով ասում է. «դու կլինես այսուհետև տատմէր իմ փոխարէն, քեզ եմ յանձնում իմ փեչակը.» և այս խօսքերից յետոյ վերջինս ստանալով այդ ձրի շնորքը՝ արթնանում է և սկսում է մանկասպանութեան գործը.... 1872 թվին՝ երբ խոլերան սկսել էր իր սոսկալի արշաւանքը՝ ամեն անցած տեղերում ահ և մահ տարածելով՝ բարեհաճեց նոյնպէս այցելել և Ջէնկէզուր գաւառի Գօրէս գիւղը։ Զը նայելով գաւառապետի տրթուն հսկողութեանը և նահանգական բժիշկից ուղարկած տպագիր խրատներին, որոնք աշխատում էին այդ ահաւոր ցաւի առաջն առնել, ժողովուրդը կարծելով որ դա աստուածական պատիժ է եկած երկնքից՝ անհոգութեամբ թողեց իրան նախախնամութեան կամքին, դրա հետևանքը այն եղաւ որ երկու ամսի միջոցում յիշեալ գիւղի հաւիւ 400 տուն բնակիչներից անխտիր կոտորվեցան մինչև 135 հոգի։ Այս և սոյնպիսի անհամար իրողութիւնները աչքի առաջ ունենալով՝ կարծեմ ամենայն հասկացող մարդ պիտի համոզվի որ մի ազգի մէջ ինչպէս մերը՝ բարոյական յեղափոխութիւնը պիտի սկսել արմատներից, և այն իր նմաններից, իր սրտի և մտքի մօտ—բարեկամ անձերից, ինչպէս են օրինակ ժողովրդական քահանաները. ինչ որ դրանք կարող են անել, նոյնը որ և է ուրիշ միջոցով չուտ և աջողակ չէ կարելի իրագործել։ Որքան ժամանակ է հարկաւոր որ ժողովրդի մէջ հիմք դրած այս կամ այն կանխակալ կարծիքը արմատախիլ անել, մինչդեռ շատերը ստորութիւն են համարում Ոլիմպիական բարձրութենից ներքև նայել, իսկ հոգևորականները պարապութենից վանքի անկիւններում ճանճեր են որսում...։

Եփրեմ Դաւթեանց

---

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 1 մայիսի

Պարոն խմբագիր, ձեզ յայտնի է որ ապրիլի 27-ին հայ գերասանական խումբը մասնակցութեամբ մի քանի թատրոնասէր անձանց տուեց Թիֆլիսի ամառային թատրոնում մի ներկայացում բարեգործական նպատակով։

Այս գործի պ. պ. կառավարիչները և մասնակցողները բարեհաճեցին առաջարկել ինձ ներկայացման հաշիւը, որից երևում է՝

ՄՈՒՏՔ

| | | |
|---|---|---|
| Օթեակներից — — — | 135 ր. | — » |
| Բազկաթոռներից — — | 243 » | — » |
| Աթոռներից — — — — | 169 » | — » |
| Գալլէրեյից — — — — | 17 » | 10 կ. |
| Աֆիշներից — — — | 2 » | 45 կ. |
| Պարգևներ — — — — | 11 » | — » |
| | 577 ր. | 55 կ. |

ԾԱԽՍ

| | | |
|---|---|---|
| Թատրոնի վարձ — — — | 176 ր. | — » |
| Պ. Տրուֆիի երգերի համար | 10 » | — » |
| Հագուստ — — — — | 10 » | — » |
| Թատրոնի ծառաներին — | 7 » | — » |
| Աֆիշներ և նրանց տարածելու համար — — — | 13 » | 40 » |
| Ջրի տոմսակներ — — — | 3 » | — » |
| Օգնութիւն չքաւոր դերասաններին — — — | 55 » | — » |
| | 274 » | 40 » |
| Զուտ արդիւնք — — — | 303 » | 15 » |

Որ և յանձնած է ում հարկն է ըստ նպատակին։

Խնդրելով ձեզ, պարոն խմբագիր, տեղ տալ այս հաշիւն ձեր լրագրի մօտագայ համարում, պարտաւոր եմ աւելացնել որ ներկայացման պ. պ. կառավարիչները խնդրեցին ինձ յայտնել լրագրութեանդ միջոցաւ իրանց խորին շնորհակալութիւնը Տ. Սաթինիկ-Զմշկեանին, պ. պ. Զմշկեանին, Սուքիասեանին և բոլոր մասնակցող անձանց, որոնք իրանց ձրի աշխատանքով օգնեցին այս բարի գործին։

Ընդունեցէք, պարոն խմբագիր, և այլն։

Գ. Սունդուկեանց

---

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երեկ մայիսի 2-ին ժամը 1-ին կէսօրից յետոյ հանդիսաւոր կերպով մտաւ ԹԻՖԼԻՍ նորին մեծութիւն Պարսից շահը։ Նորին մեծութեանը ընդունեցին քաղաքից դուրս թէ քաղաքական և զինուորական կառավարութեան ներկայացուցիչները, թէ քաղաքային վարչութեան ներկայացուցիչները և քաղաքագլուխը և վերջապէս ահագին ամբոխը, մանաւանդ պարսկահպատակները։ Իշխան Միրսկիյ ընդունեց շահին պալատի մօտ, որտեղ և պէտք է իջնի նորին մեծութիւնը։ Փողոցները զարդարված էին դրօշակներով, կամաչով և լապտերներով։ Երեկոյեան քաղաքը լուսաւորված էր։

—

ՍՈՒՐԱՄԻՑ մեզ գրում են։ «Սուրամցիները գոհ են այս տարվայ առուտուրից։ Թէ մեծ և թէ փոքր վաճառականները այս տարի իրանց ապրանքը լաւ վաճառեցին, որովհետև փոքի առատութիւն էր։»

—

Նոյն տեղից մեզ գրում են հետևեալը։ «Ապրիլի կէսին եղանակը շատ անձրևային էր Սուրամում, և այդ պատճառով գիւղացիները առատ հունձի են սպասում։ Իսկ այժմ եղանակը շատ պարզ է, միայն երեկոները դեռ ևս քիչ ցուրտ են լինում։»

—

Ապրիլի 30-ին ԹԻՖԼԻՍԻ Սօբրանիայում (հայոց կլուբում) տեղի ունեցաւ երաժշտական առաւօտ բարեգործական նպատակով։ Կօնցերտը շատ աջողված էր։ Տիկին Գամբարովի, օրիորդ Կիրպոտինի և օրիորդ Մակարովիչի պիանոյի վրա խաղը զմայլեցրին ամենքին։ Օրիորդ Կիրպոտինի մասին կարելի է ասել որ նա ունի ճիշդ, մաքուր և գուրեկան խաղ, տիկին Գամբարովի խաղը, ինչպէս միշտ ուսումնասիրած և մշակված խաղ է, իսկ օրիորդ Մակարովիչի խաղը արտիստական է։ Երկու առաջինները ածեցին Ռուբինշտայնի պիէսաները, իսկ օրիորդ Մակարովիչ անգիր ածեց Շումանի «Կարնավալ» դժուար պիէսան։ Նոյն կօնցէրտում առաջին անդամ առիթ ունեցանք լսել երիտասարդ ռուս օֆիցեր Մաշինի վիոլօնչէլի վրա գեղեցիկ խաղը։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ հաղորդում են, որ այնտեղ հասարակական գործերը կարելի կը լինէր աջողութեամբ առաջ տանել, եթէ երիտասարդութիւնը գործէր։ Բագուի երիտասարդութեան մէջ ոչինչ բարոյական կապ չը կայ։ Վաղուց Բագուի մէջ կազմվել և հաստատվել է գաղթականներին օգնելու համար մի մասնաժողով, բայց մինչև այժմ նրա գործունէութեան մասին ոչինչ չենք լսում։

—

*) Այժմ եկեղեցու շուրջը բնակվում են հիւանդ զինուորներ. բացի դրանից եկեղեցու մէջ տիֆով բռնված մեռեալները օրերով թաղում են, իսկ ժողովուրդ ամեն օր խումբ-խումբ եկեղեցի է յաճախում։ Ինչու է հասարակութիւնը գանգատվում թէ Իգդիր ցաւ կայ, Աստուծոյ դատումն է եկել մեր վրա, ինչու չէ ուզում հասկանալ որ իր կեղտոտութիւնն է Աստուծոյ ցասման պատճառ, նրա օդը որովհետև ապականում է։

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ մեզ գրում են. «Մարտի 26-ից այստեղ սաստիկ անձրևներ էին գալիս, իսկ ապրիլի 5-ին սկսեց ձիւն գալ։ Ցատկի տօներին եղանակը լաւ էր։ Քաղաքում անանցնելի ցեխեր կան»։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ հաղորդում են, որ ապրիլի 18-ին գեներալ Գէյմանի մարմինը թաղել են «Холмъ чести» անուանված գերեզմանատանը։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ գրում են, որ այնտեղի գողերը խաբել են մի գիւղացու և մի հասարակ գօտի են ծախել նրա վրա, ասելով, որ դա ոսկուց է շինած։ Նամակագիրը աւելացնում է, որ այսպիսի անցքեր վերջին ժամանակներում Ալէքսանդրապօլում շատ են պատահում։

—

ՇԱՀՆԱԶԱՐ գիւղից մեզ հաղորդում են, որ վերջին ժամանակները այնտեղ և շրջականներում աւազակութիւններ գրեթէ չեն պատահում։ Նամակագրի կարծիքով դրա պատճառը տեղական պրիստաւի հսկողութիւնն է։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԽՆՈՒՍԻ ԴԷՊՔԸ

Բաւական չէին Նիկոմիդիոյ, Ատրապատի, Սեբաստիոյ, Եւդոկիոյ, Ամասիոյ և այլ հայաբնակ գաւառաց մէջ որոցմէ հետզհետէ դանդաղագոյր կը հասնին ի պատրիարքարան, չէրքէզներուն գործած հարստահարութիւնները և ահա Խնուսի մէջ քրդաց կողմանէ դառն և սարսափահար աւարառութիւնք և սպանութիւնք տեղի ունեցեր են, անգթութիւնք որ սրտաճմլիկ են և մեծ ցաւ ու վիշտ կը պատճառեն ամէն հայրենասէր հայու։

Խնուսի ազգայիններէն 49 հոգի անձամբ Կարին երթալով, հետևեալ բողոքագիրը տուեր են Կարնոյ գաւառական վարչութեան, որ յԱզգ. պատրիարքարան հաղորդեր է անմիջապէս հարկ եղած անօրէնութիւնն ընելու համար հանդերձ տեղեկագրով մը։

Ահաւասիկ բողոքագրոյն պատճէնը.

«Երկու ամիս առաջ Ռուսիոյ զօրքը մեր գաւառը մուտ գործեց. թէև նախ բոլոր գիւղերը աչքէ անցուց և քանի մը օրէն եաքը մինչև Պուլանըխոյ և Մշոյ սահմանակէտերը յառաջացաւ և անտի վերադառնալով գաւառիս այլ և այլ գիւղերը աչքէ անցունելէ եաքը գաւառագլուխը վերադարձաւ և զօրքը բերդաքաղաքի մերձ հեռևեալ գիւղերն դադարեցուց։

«Նախ Զէվվրմէն, Հարամիկ, Քաղքիկ, Խալչավուշ, Կէրիխս, Ցարօս, Խազլու, Եէնիքէօյ, Սայլու։ Եւ գաւառիս հեռևեալ գիւղերը անպաշտպան մնացին բարբարոս քրդաց ձանկերուն մէջ օրք են՝ Խրմախայա, Սարվօլի, Խարաչօպան, Գեօվանդիկ, Լէքպուտաղ, Բուրնաղ, Գարաքէօփրիւ, Դուման, Մարթի, Շապատին, Ցաղամելիք, Խրթ։

«Նախ քրդեր Գեօվանդիկ գիւղը կոխելով, հայր մը իր երիտասարդ զաւակաւ սպաննեցին և քանի մը անձինք վերաւորեցին սոսկալի ձևերով, և ռուսաց կողմէն Թուզլայի վերակացու ղրկուած Ցարօսցի հայ իշխան մը եօթ նիզակի հարուածով վերաւորեցին և այս քանի անձանց ձիերն և տան կահկարասիքն առին և նոյն գիւղին մէջ ոչխար, ցորեան, գարի յափշտակելէն ետև. ետև. բաներ ընելէ եաքը անցան Բուրնաղ գիւղը, հայ մը սպաննեցին չարաչար մահուամբ զբաղուն սկաւառակը հանելով և այլանդակ սարսափածու ոճրագործութիւններով սպաննեցին և սոյն գիւղին մէջ 150 ոչխար և 25 սօմար ցորեան և գերի աւարառելով և ընտանեաց մէջ մինչև առաւօտ ամէն տեսակ սարսափելի չարիքներ գործելէ եաքը անցան Լէքպուտաղ, ամէն տեսակ չարիք, հարստահարութիւն և բռնաբարութիւն ընելէ եաքը անցան Խարաքէօրրիւ. սոյն գիւղի քահանայի տունը մտնելով՝ տնական կահ կարասեաց հետ նոյն գիւղի եկեղեցւոյ սրբազան անօթները պղծեցին և տարին և երեքօրեայ թաղեալ մանուկ մը գերեզմանէն արտահանեցին և նաև մեռեալ մը սրածայր շամփուրով մը հանեցին տան մէջէն որ թէև գերեզմանատուն չէր, բայց քրդաց երկիւղէն տուներ թաղուեցան նոյն տանի մեռեալներ. որովհետև կահկարասիքն հայոց թաղեալ կարծելով՝ գեռին փորձելու համար ծակոտեցին և այս պատճառաւ մեռեալը արտաքսուեցաւ. և թէև ամէն ընտանեաց մէջ խառնակեցան մինչև առաւօտ, սակայն մէկ կնոջ մը վրա յարձակելով տան ու վեց քիւրդ մարդախոշոշ դազանի մը պէս և մինչ յարշալոյս լրկտիրաբար չարչարեցին զողրմելին և թողուցին ցուրտ դիակ մը հողին վրա և շատ մը ոչխար, էշ, ձի, կաշի, ձէթ, ցորեան, գարի, դրամ յափշտակելէ եաք մեկնեցան ի Դուման, բոլոր հայոց տուներն կողոպտեցին և եկեղեցւոյ սուրբ անօթները պղծելով կողոպտեցին. նոյնպէս բոլոր գիւղի ինչք ու սաացուածք և անասունք. և որ առաւել զարմանալին է, նոյն գիւղի երիտասարդ անձի մը տունը կողոպտուելով, և երիտասարդ տանուտեառն քսուրդ աղայէն օգնութիւն խնդրելու նպատակաւ բողոքելու դիմելովն և սոյն ձիւաղ աղան տանտիրոջ տուն գալով և տեսնելով որ անասուններէն ի զատ թէև ամէն սաացուածքն յափշտակուած են, դառնալով աղուն կը հարցնէ թէ «ինչո՞ւ սուտ խօսացիր, հապա ինչդ յափշտակեցին». երբ աղան պատասխանեց թէ «ահա անասուններէն ի զատ ոչինչ թողուած են», նոյն ժամայն քիւրդ աղան տանջեց աղան և ըսաւ թէ ահա արժան է որ անասուններդ ալ առնուին և առաւ տարաւ և աղուն բողոքն այս արդիւնքն ունեցաւ և անտի անցան ի Մասրրվի. բնակչաց կէսը փախան թէև, բայց կողոպտուելէ ազատ չը մնացին և գիւղը բոլորովին կեղեքեցին և եկեղեցւոյ սրբազան անօթներն պղծեցին և ազատ անազատ ընտանիքներն լկտիաբար բռնաբարեցին և չը թողլով չը գործուած չարիք անցան ի Շապատին. այր մարդիկ նախապէս խոյս տուին գիւղէն, որոց հետեւեցան կանայք, աղջկունք և մանկտիք բոկոտն և գլխաբաց. ոմանք ազատեցան կիսակենդան և կին մը իւր կաթնկեր մանկանէն յափշտակուելով ճանապարհին վրա խաժամուժ բազմութեան մէջ բռնաբարեցաւ և մեռաւ, և գիւղը խպտաւարառեցաւ և անտի Ցաղամելիքը անցնելով քանի մը անձինք վերաւորեցին և զոմանս չարաչար սարսափմամբ խոշտանգեցին, տանջեցին և գիւղը խպտաւ աւարառելով անցան ի Խրթ և նոյն գիւղի հայոց բէյլիսը ի կոճեղս պնդելով հազիւ կիսակենդան ազատեցաւ. սակայն ընտանեաց մէջ խառնակեցան մինչև առաւօտ և ամէն աւարառութիւն և ոճրագործութիւն ի գործ դրուեցաւ այս խեղճ և անխնամ գաւառի բոլոր հարբստահարեալ գիւղերու վրա երեք հազար ասպատակ և ոճրագործ քրդաց ձեռքով որոց գործած չարիքներու բովանդակութիւնն անհնարին է նկարագրել։

«Գալով ներկայ եղելութեանց, ռուսք բռնած գիւղերէն յետոյ նահանջեցան և ահա բոլոր գաւառն անմիջապէս յետոյ նահանջելու շարժման մէջ լինելին տեսնելով հարկադրեցանք նեղքոյ կնքեալ անձինքս ի դիմաց համայն ժողովրդեան Կարին գալ և Ձեր բարեգութ վարչութեան ներկայացնել գաւառնուս եղեալ և ըլլալիք անասելի չարիքները յանմիջական դարման անհնամ գաւառիս մընացելոյ ի ճիրանս արիւնարբու բարբարոսաց։ Արդ հարստահարեալ գիւղերն պաշարման մէջ ըլլալով ոչ ոք ի նոցանէ ազատել կարողանալով բայց միայն երանելւոյն սրբազան պատմութեան համեմատ մաղապուծ սգոյ և լալոց գուժկանը մեր մէջ ժամանելով սուգուեցաւ ամէն չարիք և ռուսաց զօրքերն մեր գիւղերէն բոլորովին յետս նահանջեցան և ահա ապատեալներս ենք նեղքոյ գրեալ անձինք որ չը գիտենք թէ գաւառիս խպտաւ զոհ եղաւ բարոյապէս և նիւթապէս սոյն արիւնարբու լեգէոն գնդին»։

Սոյն սրտաճմլիկ դէպքը Ազգ. Պատրիարքարանի կողմանէ Թագրիրով մը Բ. Դրան հաղորդուած լինելով սիրելի է մեզ հաւատալ թէ կայսերական կառավարութիւնը անշուտ պիտի պատժէ սոյն սահակ, վայրագն և բարբարոս եղեռնագործները որոնք Հայաստանի խառն ժողովրդեան ցեցն ու ուտիճը եղած են։

(Հայրենիք)

## ՐՈՒՄԻՆԻԱ

Բուխարէստից գրում են հետևեալը ապրիլի 7/19-ին։

«Երէկ դռնափակ մի ժողով կայացաւ ուր պ. Բրատիանիօ յայտնեց թէ իր ճանապարհորդութիւնը ինչ արդիւնք է ունեցել։ Մեծ տէրութիւնները, ասաւ, որոշած են խստիւ պաշտպանել այն շահերը որոնք էական են համարում իրանց սեփական ապահովութեան համար. բայց երկրորդական համարված շահերի համար հոգս չեն անի։ Աւստրիան և Գերմանիան կամենում են որ Ռուսաստանը ոչ մի կերպով չը վնասի Դունայ վրա նաւարկութեան ազատութեանը. իսկ Բեսարաբիայի հարցի վերաբերութեամբ, Ռումինիան կարող է վստահել նրանց օգնութեան, մինչև որ այդ հարցը կապված է Մեսմ նաւարկութեան ազատութեան հարցի հետ։ Աւելացրեց նաև թէ երկու տէրութիւններն էլ բաւականութիւն ստացած կը լինեն, եթէ Դունայ գետը ջեզրք դրութեան մէջ դրվի մի քանի ապահովացնող պայմաններով։ Բերլինի կաբինէտը խորհուրդ տուեց նաև թէ Ռումինիայի համար աւելի շահաւոր կը լինէր Ռուսաստանի հետ կարգադրել այս գործերը։ Պ. Բրատիանօ իր խօսքը եզրակացրեց ասելով թէ Ռումինիայի դրութիւնը շատ ծանր է։

Ռումինական մինիստրն այդ յայտարարութենից յետոյ սաստիկ տաք և աղմկալից վիճաբանութիւն բացվեցաւ։ Ներակոյսի անդամներից և պատգամաւորներից շատերը որոնք ընդհանրապէս կառավարութեան կողմնակից էին, սաստիկ յարձակվեցան պ. Կոգալնիսէանոյի վրա և ասեցին թէ նրա ներկայութիւնը կաբինէտում, թէ պարլամենտի և թէ Եւրոպայի վստահութիւնը պակասցնում է։ Պ. Կոգալնիսէանս պատասխանեց թէ որ և իցէ դէպքում իր պաշտօնակիցների խորհրդակցութեամբ է գործել. այնու ամենայնիւ ինք պատրաստ է հրաժարվել, եթէ պարլամենտը անվստահութեան քուէ տայ իր դէմ, հրապարակական նստում։

Ռուսաստանի գործակատար պարոն Ստուարտ երբէք չէ խօսել Կարլ իշխանի հետ այնպիսի սպառնալի լեզուով, ինչպէս գրել է «Politische Correspondenz» լրագիրը։ Նա խօսեց պարզապէս թէ ռումինական մամուլը և պարլամենտում անդադար նորոգվող վիճաբանութիւնները ինչպէս վրդովում են ամենի միտքը։ Պարոն Ստուարտ դանդաղեց մանաւորապէս այն չափազանց խօսքերից որոնք պ. Կոգալնիսէանս խօսեցաւ վերջին վիճաբանութիւնների ժամանակ և որոնք միայն, ասաց պարոն Ստուարտ, կարող էին դիպլոմատիական յարաբերութիւնների դադարելու պատճառ լինել, եթէ Ռուսաստան կամենար գործերը ծայրայեղութեան հասցնել։ Պարոն Ստուարտ բացատրեց թէ ինչ վտանգներ են առաջ գալի այդպիսի յուզմունքից, մանաւանդ այն օրերին որ ռուսները սոսկված են պատերազմական կարգադրութիւններ անելու թէպէտ այդ կարգադրութիւնները երբէք թշնամական նպատակով չեն Ռումինիայի դէմ և պարզապէս զգուշութեան համար են լինում։ Իր խօսքը եզրակացրեց ասելով թէ ռումինական կառավարութեան համար աւելի շահաւոր կը լինէր մտքերը հանդարտեցնել քան թէ գրգռել, որովհետև գործերի այդ դրութիւնը կարող է հասնել այնպիսի հեռանկարների որոնց պատասխանատուութիւնը Ռուսաստանը չի ընդունի իր վրա և դրա մասին կանխաւ իմաց է տալիս։

Բուխարէստից գրում են թէ շոգեկառքերով թնդանօթներ և ռազմամթերքներ են բերվում, Բոլգարիա փոխադրվելու համար։

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Վիէննայից գրում են ապրիլի 7/19-ին, որ Բիսմարկ իշխանը առաջարկում է որ ռուսական բանակը յետ քաշվի Ադրիանապօլ և անգլիական նաւատորմը Պիրէ կամ Սալօնիկի ծոցը որով հեռացած չի լինի իր ածուխի պահեստներից։ Երևի թէ Ռուսաստանը կը համաձայնվի դրան, բայց պայման կառաջարկէ որ նախ թիւրքերը մաքրեն Շումլա և Բաթումը։ Թիւրքերը իրանց պատրաստ են ցոյց տալիս մաքրել Շումլա, Վարնան և Բաթումը, եթէ ռուսները քաշվեն Կ. Պօլսի չրջականներից։ Ռուսներն էլ իրանց կողմից ընդունում են միայն մաքրել Էրզրում։ Այս դժուարութիւնը պատճառ է եղած գործերի երկարաձգվելուն։

—«Journal de Génève» լրագրին Զմիւռնիայից հաղորդում են ապրիլի 19-ից հետևեալը. «Երէկ առաջին մինիստրի պաշտօնը ստացած Սադիկ-փաշան ծնվեցաւ խեղճ ծնողներից Զմիւռնիայի վիլայէտում գտնվող Բայնդիրում, և 55 տարեկանից աւելի չէ։ Մանկութենից նա ձգտումն էր ցոյց տալի դէպի ուսումը, բայց իր ցանկութեանը չը կարողացաւ բաւականութիւն տալ այն չրջանում, որ չրջանի մէջ գտնվում էր։ «Ես կամենում եմ կորչել այս տեղից—կամենում եմ սովորել միայն, կրթութեան շնորքով մարդը կարող է մի բանի հասնել»։ Երբ նա 18 տարեկան դարձաւ, իր հայրական տունը և քաղաքը թողեց, և ազգատ, առանց ոչ մի միջոցի, ուղևորվեցաւ Զմիւռնիա, իրան գիտութեանը նուիրելու համար։ Նա մէկ իմամին դիմեց, որը զարմանալով սրա ուսման վրա ունեցած փափագի վրա, վճռեց դասեր տալ նրան, որ մեծ օգուտ բերեցին նրան. շուտով նա գիտութեան ամէն ճիւղերի մէջ զարմանալի առաջադիմութիւններ արաւ։ Առաջին ամենազժուար քայլը արած էր. Սադիկը ոչ մի կօպէկ չը ծախսելով գիտութիւններ ձեռք բերեց։ Նրա բարի հանճար—իմամը տեղ գտաւ Սադիկի համար մաքսատան կառավարչի մօտ Զմիւռնիայում, որով նա կարողացաւ համեստութեամբ ապրել։ Երբ նրան, իր պաշտպանի հետ միասին արտաքսեցին ծառայութենից, ստորացած, բայց չը վնասված վերադարձաւ իր հայրական տունը, ուր նրա հետ անողորմ կերպով էին վարվում. «Այդ ինչ է—ասացին նրան—ինչ բանի պէտք եկաւ քո կրթութիւնը։» Այդպիսի ծաղրերից կատաղած, որոնց անօրէնութիւնը հասկանում էր Սադիկը, Զմիւռնիա վերադարձաւ և այն բանին կարողացաւ հասնել, որ նրան կրկին մաքսատան մէջ ընդունեցին որպէս կիսատիպ այսինքն գրագիր։ Երկու տարուց յետոյ նա գնաց Կ. Պոլիս, և դրանից յետոյ, դրա գործերը աջողում էին։ Նա ամենից առաջ այդինեան վալի էր նշանակված, յետոյ ֆինանսների մինիստր, մի քանի ժամանակ փարիզի դեսպան էր, և այլն։ Սադիկ-փաշան կայսրութեան մէջ ամենից նշանաւոր ֆինանսիստներից մէկն է։ Իր մեծ վիզիրին ներկայացրած զեկուցումի մէջ 1869 թուին առաջինն էր որ ազմուկ հանեց, երկրին սպառնող ֆինանսների ճգնաժամի պատճառով։ «Մենք պէտք է չափաւոր լինենք—գրում էր նա, որովհետև մեր իւրաքանչիւր տարվայ դեֆիցիտը տասը միլիոն ֆունտերի է հասնում, իսկ տասը տարուց յետոյ մեր բիւջետի վերաբերեալ ծախսերը կը բարձրանան 50% մեր ազգային մուտքից»։

—«Հաւասի Ընկերութեանը» Աթէնքից հեռագրում են մայիսի 1-ից, որ Անգլիայի և Յունաստանի մէջ սկսած բանակցութիւնները զինադադար կապելու համար յունական գաւառների և Թիւրքիայի մէջ շարունակվում են։ Յունաստանը խնդրեց Անգլիայից պայման կապել նրա հետ, նրա ապագայ գործունէութեան եղանակը կարգադրելու համար։

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌՈՂՋԱԿԱՆ—ԱՍԵՆԻԶԱՅԻՕՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՒՈՐԸ ծաղիկ տարափոխիկ հիւանդութեան առաջն առնելու համար, հրատիրում է իր բաժնի մէջ (Թիֆլիսի առաջին, երկրորդ, երրորդ և առանձին մասների) բնակիչներին ոքան կարելի է շուտով կարել երեխաների ծաղիկը։ Ծաղիկը պատուաստում են երեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը առաւօտեան ժամի 10-ից ծաղիկ պատուաստող հիմնարկութեան մէջ, որ գտնվում է Զավշավաձևսկայա փողոցում, զինուորական գիմնազիայի դիմացը։ Բացի այդ առողջական առաջին բաժինը ունի ծաղիկ պատուաստող, որ ամեն օր ծնողների պահանջներին համեմատ ծաղիկ է պատուաստում անվրում։

3—3

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ, որ ուսում է առել Փարիզում, ցանկանում է տալ ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԵՐ։ Կարող է նոյնպէս ՐԵՊԵՏԻՏՈՐԻ ՊԱՇՏՕՆ վարել։ Հասցէն կարելի է իմանալ «ՄՇԱԿԻ» խմբագրատանը։

9—10

ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ

Վաճառականներից և տներ շինողներից տուած ձևերով կամ գործարանների պրէյսկուրանտներով՝ պատուհանների, դռների և վառարանների կազմածքներ (приборы)։ Բացի այդ ծախվում են մեր կուպղեր (замки), ղլանակներ, գամեր, սողնակներ (задвижки), որոնք գործ են ածվում արկղների, կոմոդների, պահարանների և բազկաթոռների համար։ Ծախվում են նմանապէս ծորակներ (краны), սամովարներ, մոմակալներ, և այլն։ Այս բոլոր իրեղէնները եղբ. Բաստաշեվների Տուլայում գտնված յայտնի գործարանից են։ Ցանկացողները Թիֆլիսում պէտք է դիմեն «Русскій Магазинъ» Միխայելովսկայա փողոց № 85։

Կովկասի համար գործակալ Ա. ԿՐԻԺԱՆՈՎՍԿԻ։

6—6 (2)

МАГАЗИНЫ ОТДАЮТСЯ ВЪ НАЕМЪ

ПО ОЧЕНЬ ДЕШЕВЫМЪ ЦѢНАМЪ

**ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ.**

**ԱՐՑՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՈՒՄ**

ՀԱՏ ԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ, ՎԱՐՁՈՎ ԵՆ ՏՐՎՈՒՄ

ԽԱՆՈՒԹՆԵՐԸ

Կենդանիների հովանաւորութեան Թիֆլիսի ընկերութեան վարչութիւնը յայտնում է, որ վարչութեան կազմակերպութիւնը, ընդհանուր ժողովների վճիռներին համեմատ, այժմ հետևեալն է. Նախագահ Ս. Ա. Տալեղին, փոխանախագահ Դ. Ի. Կիպիանի, վարչութեան անդամները՝ իշխան Դ. Դ. Հ.օրչաձէ, Մ. Ն. Գարսեվանով, և անդրկովկասեան մուֆտի Հաջի-Էֆենդի-Մուստաֆա-Էֆենդի-Զադէ։ Վարչութեան փոխ անդամներ. Մ. Կ. Լոմիձէ, Ե. Ի. Տիմիրիազեվ, Ա. Ի. Համբարով, գանձապահ Ե. Գ. Սերգէեվ, փոխ գանձապահ Գ. Ն. Իսէլեանի, քարտուղար Ն. Ի. Մեշչերսկի, փոխ քարտուղար Ս. Ս. Հչուկին։

Ներսիսեան Հայոց Ազգային—Հոգևոր դպրոցի աշակերտաց առաջիկան հարցաքննութիւնը լինելու է հետևեալ կարգաւ։

| Օրեր | Ամսաթիւ | Առարկաներ | Դասատուներ |
|---|---|---|---|
| | 1878 Ապրիլի | | |
| Շաբաթ | 29 | Կրօն, եկեղեցական պատմ. «սուրբ պատմ.» | I—VI. |
| » | » | Տօմար . . . . . | V. |
| | Մայիսի | | |
| Երեքշաբթի | 2 | Հայոց լեզու . . . . . | I—VI. |
| » | » | Պատմութիւն հայոց մատենագրութեան. . | VI. |
| Ուրբաթ | 5 | Ռուսաց լեզու . . . . . | I—VI. |
| » | » | Ռուսաց պատմութիւն. . . . . | V. |
| Երկուշաբթի | 8 | Հայոց լեզու, ռուսաց լեզու, թուաբանութիւն | Պատրաստական դասատան |
| Չորեքշաբթի | 10 | Ֆրանսիացւոց լեզու . . . . . | II—VI. |
| » | » | Մանկավարժութիւն . . . . . | VI. |
| Ուրբաթ | 12 | Աշխարհագրութիւն . . . . . | I—VI. |
| » | » | Ընդհանուր պատմութիւն . . . . . | II—IV. |
| Չորեքշաբթի | 17 | Մատեմատիքա . . . . . | I—VI. |
| » | » | Գծագրութիւն . . . . . | II և III. |
| Շաբաթ | 20 | Բնագիտութիւն. . . . . | I—VI. |
| » | » | Ֆիզիքական աշխարհագրութիւն . . . . | IV և V. |
| » | » | Ֆիզիքա . . . . . | V և VI. |
| Ուրբաթ | 26 | Ընդհանուր պատմութիւն . . . . . | V և VI. |
| » | » | Հայոց պատմութիւն . . . . . , . . | IV, V և VI. |
| » | » | Պատմութիւն ընդհանուր մատենագրութեան | VI. |
| Շաբաթ | 27 | Գրութիւն, նկարչութիւն երգեցողութիւն . | |

Հարցաքննութիւնը սկսվելու է առաւօտեան 8 ժամին. իսկ վեցերորդեցւոցն ոչ կանուխ քան 12½ ժամն միջօրէին։

Հոգաբարձու Մ. Դոլուխանեանց

Գործաւար Բ. Զալալեանց

ТИФЛИССКІЙ КОЖЕВЕННЫЙ ЗАВОДЪ

ԹԻՖԼԻՍԵԱՆ ԿԱՇՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

Տամաժէննայա փողոցի վրա Ցունայ եկեղեցու դիմաց տուն № 22

Պատիւ ունի յայտնելու պ. պ. վաճառականներին և սպառողներին, որ այդ գործարանում գործվում են և նորա մէջ միշտ մեծ քանակութեամբ գտնվում են ամեն տեսակ ԿԱՇԻՆԵՐ կօշիկների, թամբերի, կառքերի արուեստների համար և նոյնպէս հում կաշիներ։

Մեծ քանակութեամբ վաճառելը կատարվում է գործարանի կանտօրայում, որտեղ ընդունվում են և պատուէրներ։ Մաս մաս ծախվում է Սիօնի մայր եկեղեցու դիմաց գտնվող մագազինում։

25—15 (2)

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹԵԱՆ ԹԻՖԼԻՍԻ ընկերութեան նախագահը պատիւ ունի խնդարարաբար խնդրել ընկերութեան և վարչութեան պ. պ. անդամներին ներկայ գտնվել ընկերութեան ԱՐՏԱԿԱՐԳ ՆԻՍՏԻՆ, որ լինելու է մայիսի 2-ին, երեկոյեան ժամը 7-ին։

2—3

Շուտով հրատարակելու եմ իմ ժողոված «Անեկդոտները», որոնք պարունակում են իրանց մէջ շատ երևոյթներ ազգային ներկայ և անցեալ կեանքից։

Տպվելու են բաժանորդագրութեամբ. ամեն մի օրինակի գինը 50 կոպ. է։ Թիֆլիսում բաժանորդ կարելի է գրվել պ. Զաքարիա Գրիգորեանցի գրավաճառանոցում։

3—3 Գ. Շերմազանեանց.

ՄԱՅԻՍԻ 3. ՏԵՂԵԿԱՑՈՒՑ ԹԻՖԼԻՍ 1878.

| ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Մայիսի 2-ին) | Ր. | Կ. |
|---|---|---|
| Ոսկին (պոլուսկերիալը) | 8 | 80 |
| Հին 82 պր. մ. արծ. 1000 մ. | 1500 | — |
| Հին 20 կ. 72 պր. 1000 » | 1300 | — |
| Վիգրիչնի 5% առաջի փախառութեան տոմ. 100 » | 233 | — |
| Երկրորդ 5% վիգրիչնի » | 235 | — |
| Մարսելի կուրսը 237— | 100 | — |
| Լոնդոնի կուրսը Օդեսայի վրա. . . . . | 10 | 67 |
| Վենայի կուրսը աժէ 112 գլ. | 121 | — |
| Դաւրեժի բարաթը. . . | 5 | 75 |
| Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . . | 300 | |
| Փոթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ. | 125 | — |
| Շաքարը բրօցկու . . | 8 | 40 |
| » միւս տեսակը. | 8 | 30 |
| » չաքարաւազը . | 6 | — |
| » տրանզիտը. . | 6 | 50 |
| » մաքսը վճարած | 12 | — |
| Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . . | 8 | 50 |
| Միւս տեսակը հին սերմից. | 7 | 70 |
| Բուրդը թուշի . . . | 8 | 50 |
| » թարաքամի . | 4 | 50 |
| Ալիւր Շորագալու . . | 2 | — |
| » Երևանի. . . . | — | — |
| Գարին. . . . . | 1 | 40 |
| Մոմը բնաճարպի (стеар.) | 13 | 40 |
| Մետաքս Նուխվայ. . | 160 | — |
| Կախեթուանը. . . . | 90 | — |
| Կոկոնը Նուխվայ (բոմ.) | 47 | — |
| Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց . . . . . | 55 | — |
| Կոֆէն մոկօի. . . . | 28 | — |
| » լիվանի . . . | 20 | — |
| » մարտինկօյինը | 19 | — |

| ՀԵՌԱԳՐԻՐ | Ր. | Կ. |
|---|---|---|
| Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . | 1 | |
| Ռուսաստան . | 2 | |
| Ասիա . . | 3 | |
| Անգլիա. . | 4 | |
| Գերմանիա . | 2 | 88 |
| Ֆրանսիա . | 3 | 75 |

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծնողկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30—50 ռուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 ռուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 ռուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Անանով։

ԻՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլովո (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ։

| | առաւօտ. | երեկոյեան |
|---|---|---|
| Թիֆլիսից . . | 9. 21 | 5. 18 |
| Գօրի . . . | 11. 58 | 9. 43 |
| Միխայլովո. | 1. 29 | 11. 57 |
| Ռիոն . . . | 6. 47 | |
| Փոթի . . . | 9. 40 | |

| | առաւօտ. | |
|---|---|---|
| Փոթիից . . | 9. 13 | |
| Ռիոն . . . | 12. 13 | |
| Միխայլովո. . | 5. 39 | 1 37 |
| Գօրի. . . . | 7. 5 | 4 8 |
| Թիֆլիս. . . | 9. 31 | 7 56 |

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

| | I կլաս. | II կլ. | III կլ. |
|---|---|---|---|
| Մցխէթ . | 90 | 68 | 38 |
| Գօրի. . . | 3. 20 | 2. 40 | 1. 33 |
| Սուրամ. | 5. 22 | 3. 92 | 2. 18 |
| Ռիոն. . . | 9. | 6. 75 | 3. 75 |
| Փոթի . . | 13. 1 | 9. 75 | 5. 42 |

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բաղուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փոթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի։ Բելիկլիսչի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ։

| ՆԱՄԱԿՆԵՐ | Կոպ. |
|---|---|
| Բաց նամակը արժէ . | 4 |
| Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ | 8 |
| Ամերիկա . . . | 8 |
| Պարսկաստան . . . | 8 |
| Հնդկաստան . . | 70 |
| Եգիպտոս | 27 |

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. վէրմիշէվ ներքին հիւանդութիւններ, Քուչարեանց վիրաբուժական և ականջի հիւանդութիւններ։

Երեքշաբթի. վէրմիշէվ ներքին հ. Ռէյխ աչքի հ. 9—11 ժամ, Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան։

Չորեքշաբթի. վէրմիշէվ ներքին հ. Բակատ կրծքային և ջղային։

Հինգշաբթի. վէրմիշէվ ներքին հ. Գավրոն սկիզ կանանց և մանկաբարձութեան, 9—10 ժամ, Բակատ վենէրական և կաշու հ. Օրբէլիատ ատամնացաւեր։

Ուրբաթ. վէրմիշէվ ներքին հ. Բախուտով մանկաբարձութեան, կանանց և երեխաների հ. Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների հ.

Շաբաթ. վէրմիշէվ ներքին հ. Ռէյխ աչքերի հ. Բակատ կրծքային և ջղային հիւանդութիւններ։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ԲԱԳՈՒ. Ա. Դուք գրում էք, որ խնդիրքը նահանգապետին ներկայացրած է ոչ թէ Ն. խորէնի միջնորդութեամբ, այլ ուրիշների. Հաւատացրէք ձեր քաղաքի հասարակութիւնը, որ այդ մի և նոյն է։

—ԹԻՖԼԻՍ. Գիւղացի. Ձեր յօդուածը չենք տպի, որովհետև այդ լրագրին չենք պատասխանում։ Իրանց ուղարկեցէք, դուցէ նրանք կը տպեն նիւթի առատութեան պատճառով։

—ԹԻՖԼԻՍ. Զ. Մ. Ձեր յօդուածներից մէկը արդէն տվեցինք չարելու, միւսը կը տանք այն ժամանակ, երբ կը բերէք շարունակութիւնը։

—ԵՐԵՒԱՆ. Ա. ԵՐ. Նամակը Շահի ձեր քաղաքը գալու մասին շուտով կը տպենք։

Дозволено Цензурою Мая 2 Тифлисъ 1878 г. Типографія Мартиросіанца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ